փողբ ղուռ մի, անճախ էջ մի առանց բեռ կու մտանէ. և ունի գոց ուղթը. և լիակատարն յայլում տեղ գրեալ կայ: Եւ յորժամ չինեաց կոստանդիանոս զսուրբ Ցարութիւնն, յետ նորա չինեաց զսուրբ Ցակոբ, և եսուր սուրբ Լուսաւորչի փէչքէշ 'ի պատիւ այնր որ ասաց Տրդատայ, Երթ գնա ասա Թագաւորին՝ թէ դու չինեա զսուրբ Ցարութիւնն. նորա համար պատիւ ետ սուրբ Ցակոբ Լուսաւորչի. ամէն:

Կը շարունակուի:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Գաղղիոյ Ռոճիկները: — Դրոբլոն՝ իբրև նախագահ ծերակուտին և իբրև ծերակուտի անդամ, նախագահ Դատաստանարանին (Cours de Cassation) և Ուսումնարանին անդամակից կ'ընդունի, 196,500 ֆր. առանց հաշուելու բնակութիւնն և ուրիշ շահերը: Նիէլ մարաջախտը իբրև ծերակուտի անդամ, մարաջախտ, պատույ լէգէոնին մեծ խաչ պատուանշանը կրող և պաշտօնակալ պատերազմի 193,000 ֆր: Մաք-Մահոն մարաջախտն՝ ընդհանուր կուսակալ Ալճերիոյ ֆր. 188,000: Պարակէ-տ'Իլլիէ, Ռընեոյ տը Սէնժան տ'Անժէլի, Քանրոպէր և Պազէն՝ իւրաքանչիւրն առանձին առանձին 163,000 ֆր: Վայլեան մարաջախտն՝ իբրև պաշտօնակալ կայսերական տան և մեծ մարաջախտ Պալատան 229,000 ֆր: Ծովային պաշտօնակալը Ռիկոյ տը Ժընուլլի ծովապետը 163,000 ֆր: Պարոշ և Մանեը պաշտօնակալքն իւրաքանչիւրը 130,000 ֆր. Բերտինեի, Տրուէն տը Լիւիս, և Լաւալէդ՝ իբրև անդամք գաղտնի խորհրդոյ իւրաքանչիւրը 105,000 ֆր: Կոյեոն զօրավարը 105,000 ֆր: Մոնդոպան զօրավարը 148,000 ֆր: Ֆլէօրի զօրավարը 119,000 ֆր: Էտկար Նէյ 118,000 ֆր.

Խորութիւն ծովու: — Ըստ գրելոյ Moniteur Universel լրագրին ներքնածովային պարաններ ձգելու համար՝ գնտաչափութեամբ եղած փորձերով ծովուն այլ և այլ կողմեր ունեցած խորութիւնն գտնուեր է. — ընդ մէջ Շուետի և Գերմանիոյ՝ Պալդիկ ծովուն խորութիւնն է 40 մեդր. Ադրիականն ընդ մէջ Վենետկոյ և Դրիէստի 42. Մանկըա՝ 100: Իռլանտայի ծովուն հարաւ-արևմտեան կողմը 660. Միջերկրականը՝ Ճիպրլդէրրայի արևելեան կողմը 100. Սպանիոյ ծովեզերքն 2,000. Հոռն և Բարէյուսոյ սարերուն ծովերը 5,000 մեդր:

Նոր մագնիսահանք: — Pays լրագրին մէջ կը կարդանք որ Սաքսոնիոյ մէջ մագնիսացեալ լեռ մը գտնուեր է, որուն մէջէն մագնիսեղէն երկաթի երակ մը կ'անցնի քանի մը հարիւրամեդր թանձրութեամբ: Ինչուան հիմա ճանչցուածներուն մէջ ամենէն աւելի հարուստ մագնիսահանքն է, յորմէ արդէն խսկ հիմակուընէ մեծահատոր զանգուածներ դուրս հանուած են: Իր մէջն եղած մագնիսը բաւական է բոլոր աշխարհիս համար: Պ. Տուր (Dower) պերլինցի բնագէտը այս հանքէն կտոր մը ունեցեր է որ 30 հազարակրամ կը կշռէ:

Մեռելութիւն 'ի Լոնտրա: — Լոնտրայի վիճակագրութիւնը կը հաշուէր անցեալ տարի 3,082,372 բնակիչ, 340,917 տանց մէջ, 122 քառ. մղոն տարածութեամբ. և նոյն տարուան մեռելութիւնը սակաւաթիւ է համեմատութեամբ նախընթաց տարիներուն. միջին հաշուով ըլլալով 23 առ 100, մինչդեռ 1866ին եղաւ $26\,^1/_2$ առ 100: Հիւանդութեանց մէջ սաստիկ կոտորած ընողն եղաւ ծաղկախտը, որով 13,032 անձինք մեռան: Ուրիշ հիւանդութիւն մ' ալ, ծիւրական ըսուած ախտը 8817 տղայոց մահ պատճառեց:

Առածք Սկովտիացւոց

Ամեն ծառի հարուած տուողը՝ մէկն ալ չկործանէր:

Աւելի աղէկ է տաքցընող քիչ կրակը՝ քան կիզանող մեծ հուրը:

Լաւագոյն է սատանան տնէն դուրս բռնել՝ քան դուրս ընել ջանալ:

Ո՛վ որ երբեք նեղութիւն քաշել չուզէր՝ բնաւ բարեաց արժանի չէ:

Լաւագոյն է որ մարդ մը շատ քիչ նորալուր ունենայ, քան թէ իր հօրը կախուած ըլլալը պատմէ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ